ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **07/03/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Ռուզաննա Բաբայանը, Հովիկ Գոգոյանը, Հմայակ Խաչատրյանը, Գոհար Հովհաննիսյանը, Գրիգոր Ղարիբյանը, Արթուր Մելոյանը, Ռուբեն Սաֆարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 07-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի 2024 թվականի մարտի 07-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝
1) Դրամական օգնություն տրամադրելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.
3) Ղարիբ Հովակիմյանին գումար վերադարձնելու մասին.
4) Հողամասի վարձակալության պայմանագիրը վերակնքելու համաձայնություն տալու մասին.
5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 17-ի թիվ 14 որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին.
6) Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրելու մասին.
7) Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրելու մասին.
8) Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին.
9) Ծաղկաձոր համայնքի քաղաքային տարածքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու

կանոնները հաստատելու մասին.
10) Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 08-ի N 23 որոշման մեջ լրացում կարտարելու մասին.
11) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին.
12) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղում փակուղի անվանակոչելու մասին.
13) Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր կառուցելու նախնական համաձայնություն տալու մասին
14) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
15) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.
16) Հողամասերի նպատակային նգործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
17) Հանքարդյունահանման աշխատանքներ իրականացնելու նախնական համաձայնություն տալու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով. հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Ծաղկաձոր համայնքի արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 08-ի N 2 ակտը

1.Ծաղկաձոր համայնքի բյուջեի <<այլ նպաստեր>> 4729 հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրել դրամական օգնություն 200000 / երկու հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ Ծաղկաձոր համայնքի, Աղավնաձոր գյուղի 4-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 6 հասցեի բնակիչ՝ Ալեքսան Արշավիրի Ղազարյանին, ուժեղ քամու հետևանքով վնասված բնակելի տան տանիքի վերակառուցման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և « Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32/

Լսեցին
ՂԱՐԻԲ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42 -րդ կետերով և հիմք ընդունելով Ղարիբ Հովակիմյանի դիմումը

Ղարիբ Հովակիմյանին վերադարձնել 900125006016 հաշվեհամարին սխալմամբ փոխանցված 381 600 / երեք հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԵՐԱԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով << Տելեֆոն Արմենիա>> բաց բաժնետիրական ընկերության տեխնիկական տնօրեն Գ. Գևորգյանի դիմումը

1. Համաձայնություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի փողոց 3-րդ փակուղի 8 հասցեում գտնվող 0 ,0212 հա մակերեսով բնակավայրերի, հասարակական կառուցապատման հողամասի, << Արմենիա Տելեկոմ >> փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդ <<Տելեֆոն Արմենիա >> բաց բաժնետիրական ընկերության հետ 2014 թվականի մարտի 17-ին կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը երկարացնել 10 / տաս/ տարի ժամկետով , ամսեկան վարձաչափ սահմանել 150 000 / մեկ հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սորագրման պահից

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 17-ի «Հողամասի վարձակալության պայմանագիրը վերակնքելու համաձայնություն տալու մասին» թիվ 140 որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել << Մեղրաձոր գյուղի Լևոն Գալստյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն >> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 1:
2.Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել <<Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 2:
3.Համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծակաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 4-րդ փողոց 1-ին փակուղու 18 հասցեում գտնվող՝ (կադաստրային ծածկագիր 07-010-0032-0016-001) 576,15 քմ մակերեսով ,մանկապարտեզի շենքը և բնակավայրերի, հասարակական կառուցապատման (կադաստրային ծածկագիր 07-010-0032-0016) 0,45048 հա մակերեսով հողամասը անժամկետ և անհատույց մշտական օգտագործման տրամադրել համայնքային ենթակայության Ծաղկաձոր համայնքի <<Աղավնաձոր գյուղի նախադրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

3. Համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարել և սահմանել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:
2. Աճուրդը կազմակերպել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42 -րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի պահանջներով

1.Հաստատել Ծաղկաձոր համայնքի քաղաքային տարածքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 23 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՐՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 08-ի « Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին » N 4 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
1) որոշման՝ 1-ին կետում գրված «0,0086 հա մակերեսով» թվերից և բառերից հետո լրացնել « կադաստրային ծածկագիր 07-005-0016-0248» բառերը և թվերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ՓԱԿՈՒՂԻՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 -ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի որոշման քաղվածքը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մեղրաձոր 3-րդ փողոցի, ձախակողմյան հատվածում գտնվող փակուղին անվանակոչել Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, գյուղ Մեղրաձոր 3-րդ փողոց 15-րդ փակուղի՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42/

Լսեցին
ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16 հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի պահանջներով , հիմք ընդունելով 2024 թվականի փետրվարի 27-ին իրականացված հանրային քննարկումների հիման վրա կազմված արձանագրությունը:

1. Տալ նախնական համաձայնություն <<Սատուրնավան>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, քաղաք Ծաղկաձոր Պահլավունյաց 73 հողամաս հասցեում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N1 հավելվածը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, գյուղ Արտավազ 1-ին փողոց,9 հասցեում գտնվող, 0.06000 հա մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման / կադաստրային ծածկագիր՝ 07-017-0017-0014/ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N1 հավելվածը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Արտավազ գյուղի վարչական տարածքում գտնվող, 0.20585 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ և 10-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024թվականի փետրվարի 28-ի N 1/փ-100 եզրակացությունը և Արսեն Աշոտի Սարգսյանի դիմումը

1.Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի Տաճաղբյուր փողոց 1 հողամաս հասցեում գտնվող, Արսեն Աշոտի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,6 հա մակերեսով / կադաստրային ծածկագիր՝ 07-005-0024-0030/ հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46/

Լսեցին

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16 հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի , հիմք ընդունելով 2024 թվականի մարտի 01-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը:

1. Տալ նախնական համաձայնություն «Ավանգարդ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքի գրանոդիորիտների հանքավայրում իրականացնել հանքարդյունահանման աշխատանքներ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղալյանը